

## ԱՆՆԱ ՓԱՆՈՅԱՆ

ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ,  
միջազգային տնտեսական հարաբերությունների  
ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

### ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԱՌԵԿՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆ ԱՀԿ-Ի ԵՎ ԵԱՏՄ-Ի ՄԻՋԵՎ

2015 թվականի հունվարից գործող Եվրասիական տնտեսական միության իրավական շրջանակը հիմնված է ԱՀԿ սկզբունքների և միջազգային լավագույն փորձառության վրա: Դեռևս 2011 թվականին կնքված Բազմակողմ առևտրային համակարգում Մաքսային միության գործունեության վերաբերյալ համաձայնագիրը սահմանում է ԱՀԿ կանոնների առաջնությունը Մաքսային միության, ապա նաև Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգում:

Ընդ որում, նախքան Մաքսային միության կազմավորումն ԱՀԿ-ին անդամակցած Հայաստանն ու Ղրղզստանն արտաքին առևտրի ազատականացման ավելի խիստ պարտավորություններ են ստանձնել, քան Ռուսաստանը, Ղազախստանը և դեռևս ԱՀԿ դիտորդի կարգավիճակում գտնվող Բելառուսը:

*Հիմնաբառեր՝ ԵԱՏՄ, ԱՀԿ, միասնական մաքսային սակագին, մաքսատուրքի դրույքաչափ, մաքսագերծման «post factum» ռեժիմ, բազմակողմ առևտրային համակարգ*

JEL: F01, F10, F13, F14, F17

2015 թվականի հունվարի 1-ից Եվրասիական տարածաշրջանում դրվեց տնտեսական ինտեգրման նոր փուլի սկիզբը. իր գործունեությունը սկսեց Եվրասիական տնտեսական միությունը, որի իրավական հիմքն անդամ երկրների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Հայաստան, Ղրղզստան) դեկլարանտների կողմից 2014 թվականի մայիսի 29-ին Աստանայում ստորագրված համաձայնագիրն է: Այդ փաստաթուղթն ընդգրկում է Մաքսային միու-

թյան և միասնական տնտեսական տարածքի շրջանակներում մշակված բուլոր հիմնական դրույթները: Այսպիսով՝ 2015 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած Եվրասիական տնտեսական միության համաձայնագիրը Մաքսային միության և ընդհանուր տնտեսական տարածքի համաձայնագրերի ամբողջությունն է, որոնք համապատասխանեցված են ԱՀԿ կանոններին և կանոնակարգերին:

Ղեռնա 2011 թվականի մայիսի 19-ին կողմերը ստորագրել են բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության վերաբերյալ պայմանագիր, համաձայն որի ԱՀԿ-ի կողմից կարգավորվող խնդիրների շուրջ կողմերի ստանձնած պարտավորությունները դարձել են Մաքսային միության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Պայմանագրում ամրագրվում է այն դիրքորոշումը, որ կողմերից յուրաքանչյուրի անդամակցությունն ԱՀԿ-ին բարենպաստ պայմաններ կստեղծի բազմակողմ առևտրային համակարգին նրանց միասնացման և ԱՀԿ սկզբունքներին ու դրա շրջանակներում ստանձնած պարտավորություններին համապատասխան Մաքսային միության (այսուհետ նաև՝ Եվրասիական տնտեսական միության) արդյունավետ գործունեության համար: Վերջինս սահմանում է ԱՀԿ և Մաքսային միության հաստատած կանոնների և կանոնակարգերի միջև հարաբերությունները, ինչպես նաև ԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունների շուրջ Մաքսային միության անդամ պետությունների գործողությունների համակարգման ընթացակարգը: Պայմանագիրը պահպանել է իրավական ուժը նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում:

Եվրասիական տնտեսական միության իրավական շրջանակը ներառում է ԱՀԿ սկզբունքները (համաձայնագրերի դրույթները) և միջազգային լավագույն փորձառությունը: Բազմակողմ առևտրային համակարգում Մաքսային միության գործունեության վերաբերյալ համաձայնագիրը սահմանում է ԱՀԿ կանոնների առաջնությունը Մաքսային միության իրավական համակարգում: Այս համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2012 թվականի օգոստոսին՝ Ռուսաստանի՝ ԱՀԿ-ին անդամակցությամբ: Մաքսային միության անդամ երկրների՝ ԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը վստահված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ ԵՍՍՄ միակ մշտական գործող կարգավորող մարմնին: Վերը նշված համաձայնագիրը տեղ է գտել Եվրասիական տնտեսական միության ստեղծման պայմանագրի հավելված 31-ում (Բազմակողմ առևտրային համակարգում Եվրասիական տնտեսական միության գործունեության վերաբերյալ արձանագրություն):

Մաքսային միության իրավական համակարգը ԱՀԿ հիմնարար սկզբունքների հետ ներդաշնակեցնելու նպատակով լրացումներ և փոփոխություններ են կատարվել Մաքսային միության մի շարք համաձայնագրերում, որոնց թվում են ներմուծման լիցենզավորման կանոնների, մաքսային արժեքի, երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակադեմպինգային և փոխհատուցման միջոցների կիրառման, անասնաբուժական, սանիտարական և բուսասանիտարական միջոցների վերաբերյալ համաձայնագրերը:

2015 թվականի դեկտեմբերի դրությամբ ԵՍՍՄ անդամ հինգ երկրներից չորսն ԱՀԿ անդամ են՝ բացառությամբ Բելառուսի, որն առայժմ գտնվում է ԱՀԿ դիտորդի կարգավիճակում: Ղրղզստանն անդամակցել է ԱՀԿ-ին ղեռնա 1998 թվականի դեկտեմբերի 20-ին, Հայաստանը՝ 2003 թվականի փետրվա-

րի 5-ին, Ռուսաստանը՝ 2012 թվականի օգոստոսի 22-ին, իսկ Ղազախստանը բոլորովին վերջերս՝ 2015 թվականի նոյեմբերի 30-ին դարձավ ԱՀԿ 162-րդ անդամը:

Այդուհանդերձ, ռուս գիտնական Տ. Ռուժինսկայան իր հետազոտության արդյունքում եկել է այն եզրահանգման, որ ոչ ճիշտ ընտրված բանակցային դիրքորոշումը և ազգային շուկաների պաշտպանության անարդյունավետ քաղաքականությունը պատճառ դարձան ԱՀԿ անդամակցության գործընթացում ԱՊՀ անդամ երկրների (Մոլդովա, Կրաստան, Ղրղզստան, Հայաստան) լիակատար ծախողման համար:

Մաքսային միության կազմավորումից հետո ԱՀԿ-ին անդամակցած Ռուսաստանը, Ղազախստանը և դեռևս ԱՀԿ դիտորդի կարգավիճակում գտնվող Բելառուսը կազմակերպության շրջանակներում ստանձնել են համանման պարտավորություններ, մինչդեռ առավել վաղ անդամակցած Հայաստանն ու Ղրղզստանն ազատականացման ավելի խիստ պարտավորություններ են ստանձնել (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**ԵԱՏՄ անդամ երկրների մաքսային դրույքաչափերն ըստ ԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունների<sup>1</sup>**

| Ցուցանիշներ (%)   | Ռուսաստան       | Բելառուս    | Ղազախստան   | Հայաստան       | Ղրղզստան       |
|---|-----------------|-------------|-------------|----------------|----------------|
| Մաքսատուրքի պարզ միջին դրույքաչափը                      | 8.4*<br>(7.6)** | 8.4<br>(-)  | 8.6<br>(-)  | 3.7<br>(8.5)   | 4.6<br>(7.5)   |
| Մաքսատուրքից ազատված ապրանքային դիրքերի տեսակարար կշիռը | 14.3<br>(3.3)   | 14.3<br>(-) | 14.3<br>(-) | 62.9<br>(36.4) | 49.1<br>(19.6) |
| Ոչ արժեքային դրույքաչափերի մասնաբաժինը                  | 9.8<br>(9.1)    | 9.8<br>(-)  | 9.8<br>(-)  | 0.2<br>(0)     | 0.3<br>(0.5)   |
| 15%-ից բարձր դրույքաչափերի մասնաբաժինը                  | 8.8<br>(1.7)    | 8.7<br>(-)  | 9.7<br>(-)  | 0<br>(0)       | 0.4<br>(3.0)   |
| Մաքսատուրքի առավելագույն դրույքաչափը                    | 278<br>(278)    | 278<br>(-)  | 278<br>(-)  | 10<br>(15)     | 132<br>(141)   |

\* կիսստացիոներ կիրառվող դրույքաչափերն են  
 \*\* ԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորություններով ամրագրված, այսինքն՝ հնարավոր առավելագույն դրույքաչափերն են

Գործընկեր երկրների համեմատությամբ վերջիններս մաքսատուրքի առավել ցածր միջին դրույքաչափեր են կիրառում, կրկնակի (Ղրղզստանում՝ 132%) կամ քսանութ անգամ (Հայաստանում՝ 10%) ցածր մաքսատուրքի առավելագույն դրույքաչափեր. Ռուսաստանում, Բելառուսում և Ղազախստանում մաքսատուրքի առավելագույն դրույքաչափը կազմում է 278%, թեև այդ երկրներում 15%-ից բարձր դրույքաչափերը չեն հասնում մաքսատուրքերի ընդհանուր քանակի 10%-ին անգամ: Հայաստանն ու Ղրղզստանը բնութագրվում են նաև մաքսատուրքից ազատված ապրանքային դիրքերի համեմատաբար մեծ քանակով և կիրառվող մաքսատուրքերի ոչ արժեքային (ոչ ադվալորային) դրույքաչափերի խիստ սակավությամբ:

ԱՀԿ անդամ Ղազախստանն ու դեռևս դիտորդի կարգավիճակում գտնվող Բելառուսն առայժմ չեն ամրագրել մաքսատուրքի դրույքաչափերը:

<sup>1</sup> Տե՛ս WTO, ITC and UNCTAD "World Tariff Profiles 2015", էջ 8–11:

Ամրագրված մաքսատուրքն արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) յուրաքանչյուր դիրքի համար սահմանվող ներմուծման մաքսատուրքերի վերին սահմանն է, որից բարձր մաքսատուրքեր ԱՀԿ անդամները չեն կարող կիրառել: Թեև ամրագրված մաքսատուրքերն ուղղակի ազդեցություն չունեն փաստացիորեն կիրառվող մաքսային դրույքաչափերի վրա, դրանց դերը չափազանց կարևոր է: ԱՀԿ անդամ երկրները պարտավորություն են ստանձնել աստիճանաբար նվազեցնելու մաքսատուրքերի վերին ամրագրված շեմը՝ բնականաբար պահպանելով փաստացիորեն կիրառվող մաքսատուրքերի առավել ցածր մակարդակը:

Ռուսաստանը մաքսատուրքերի դրույքաչափերն ամրագրել է ներկայումս կիրառվող դրույքաչափերին հավասար կամ դրանցից զգալիորեն ցածր մակարդակի վրա, ինչը նշանակում է, որ ամրագրումները կատարվել են ապագայի համար և առաջմ չեն գործում: Դրանց՝ ուժի մեջ մտնելուն պես Ռուսաստանը ստիպված կլինի կիրառել մաքսատուրքի ավելի ցածր դրույքաչափեր:

Մաքսային միությունը և դրա իրավահաջորդ համարվող Եվրասիական տնտեսական միությունը ենթադրում են երկրների միջև միասնական մաքսային քաղաքականության իրականացում, որն առաջին հերթին դրսևորվում է միասնական մաքսատուրքի կիրառմամբ:

Աղյուսակ 2

**ԵԱՏՄ միասնական մաքսատուրքի բնութագիրը<sup>2</sup>  
(2014 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ)<sup>3</sup>**

| Պարամետրեր   | Վերանայված միասնական մաքսային սակագին |         |         |
|--|---------------------------------------|---------|---------|
| <i>Զրոյից տարբեր ամենացածր արժեքային դրույքաչափը</i>                 | 1,7 %                                 |         |         |
| <i>Ամենաբարձր արժեքային դրույքաչափը</i>                              | 100 %                                 |         |         |
| <i>Առավել պաշտպանված ապրանքային խմբերի միջին արժեքային բաղադրիչը</i> |                                       |         |         |
| • Միս և մսից արտադրանք   | 36,9 %                                |         |         |
| • Պատրաստի մսային և ձկնային արտադրանք                                | 16,3 %                                |         |         |
| • Զենք և զինամթերք   | 17,8 %                                |         |         |
| • Ալկոհոլային և ոչ ալկոհոլային արտադրանք                             | 16,3 %                                |         |         |
| • Բնական տանձ  | 15,84 %                               |         |         |
| <i>Միասնական մաքսային սակագնի դրույքաչափի միջին թվաբանականը</i>      | 2012 թ.                               | 2013 թ. | 2014 թ. |
|  | 10 %                                  | 9,5 %   | 8,7 %   |

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը կամ միասնական մաքսատուրքը Եվրասիական տնտեսական միության Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխանող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի համակարգված ամբողջությունն է, որը կիրառվում է երրորդ երկրներից ԵԱՏՄ մաքսային տարածք ներկրվող ապրանքների նկատմամբ: Միասնական մաքսային սակագնի ներմուծման դրույքաչափի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ապրանքի ծագման երկիրը և ընտրված մաքսային ռեժիմը կամ ընթացակարգը:


Թեև որոշ ապրանքախմբերի, մասնավորապես՝ մսամթերքի, ձկնամթերքի, ալկոհոլային և ոչ ալկոհոլային ըմպելիքների, զենքի, զինամթերքի և այլ

<sup>2</sup> St'u Eurasian Economic Commission, "WTO, Integration in Eurasia and Eurasian Economic Union" // Third China Round Table on WTO Accessions: Post Accession "Maximizing the Benefits of WTO Membership and Global Economic Integration", Dushanbe, Tajikistan, 2 to 5 June 2015, էջ 10:

<sup>3</sup> Միասնական մաքսատուրքի վերջին փոփոխությունը կատարվել է 2014 թվականի փետրվարի 25-ին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի թիվ 25 արձանագրությամբ:

ապրանքների ներմուծման առնչությամբ ԵԱՏՄ միասնական մաքսային սակագինը բավականաչափ բարձր դրույքաչափեր է սահմանում, վերջինիս միջին դրույքաչափը (միջին թվաբանականը) նվազման միտում ունի (աղյուսակ 2), և դա շարունակական բնույթ է կրելու՝ համաձայն ԱՀԿ շրջանակներում ԵԱՏՄ երկրների ստանձնած պարտավորությունների:

ԵԱՏՄ շրջանակներում նախատեսվում է մաքսատուրքի դրույքաչափերի կրճատում: Միասնական մաքսատուրքի մաքսային դրույքաչափերի քանակի կրճատումը նախատեսվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) վեցանիշ մակարդակում միատարր ապրանքային խմբերի նկատմամբ՝ «0–5–12» մոդելի հիման վրա: Ներկայումս միասնական մաքսային սակագինը պարունակում է տարաբնույթ մաքսային դրույքաչափեր՝ սկսած 0-ից մինչև 80%:




**Գծապատկեր 1. Միասնական մաքսային սակագնի կառուցվածքն ըստ 2014 թվականի դրույքաչափերի<sup>4</sup>**

ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնի կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 1-ում, ըստ որի դրույքաչափերի միայն 15%-ն է զրոյական, ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքերի 27%-ը հարկվում է 5% դրույքաչափով, 11%-ը՝ 10% դրույքաչափով, ապրանքային դիրքերի 6%-ի նկատմամբ կիրառվում է մաքսատուրքի 15% դրույքաչափ, 1%-ի նկատմամբ՝ 20% դրույքաչափ, իսկ դրույքաչափերի 40%-ը գերազանցում է 20%-ի շեմը, ինչը բավական բարձր ցուցանիշ է ԱՀԿ անդամ երկրների համար:

Ըստ դրույքաչափի տեսակների՝ ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնի կառուցվածքը հետևյալն է. ապրանքային դիրքերի 85%-ի (կամ 9863 ապրանքային դիրքի) նկատմամբ կիրառվում են արժեքային (ադվալորային) դրույքաչափեր, 12%-ի (1447 ապրանքային դիրքի) նկատմամբ՝ առանձնահատուկ, իսկ 3%-ի (330 ապրանքային դիրքի) դեպքում՝ համակցված դրույքաչափեր (գծապատկեր 2):

Ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի համադրությունից երևում է, որ ապրանքախմբերի շուրջ 60%-ի պարագայում ԵՏՄ-ում գործում են ավելի բարձր մաքսային դրույքաչափեր, քան Հայաստանում, իսկ 14.5%-ի դեպքում դրանք ավելի բարձր են Հայաստանում:

<sup>4</sup> Eurasian Economic Commission, “WTO, Integration in Eurasia and Eurasian Economic Union” // Third China Round Table on WTO Accessions: Post Accession “Maximizing the Benefits of WTO Membership and Global Economic Integration”, Dushanbe, Tajikistan, 2 to 5 June 2015, p. 11.



**Գծապատկեր 2. Միասնական մաքսային սակագնի կառուցվածքն ըստ մաքսատուրքի դրույքաչափի տեսակների<sup>5</sup>**

Անդամագրվելով ԵԱՏՄ-ին՝ Հայաստանն այսուհետ ստիպված է առավել կոշտ մաքսասակագնային քաղաքականություն վարել երրորդ երկրներից ներկրվող ապրանքների նկատմամբ: Դեռևս 2014 թվականին ԱՀԿ-ին անդամակցող Հայաստանում կիրառվող ներմուծման մաքսատուրքերն ունեին ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնից տարբերվող դրույքաչափերի բավական ազատական կառուցվածք, այն է՝ կիրառվող դրույքաչափերի 62.9%-ը զրոյական էր, իսկ մնացած 37.1%-ը չէր գերազանցում 10% դրույքաչափը: Միևնույն ժամանակ, կիրառվող 0% և 10% դրույքաչափերի հարաբերակցությունը որոշակիորեն տարբերվում էր գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ապրանքների դեպքում: Այսպես՝ ներկրվող գյուղատնտեսական ապրանքների 31.1%-ը և ոչ գյուղատնտեսականների 68,2%-ը ենթակա էին մաքսատուրքի 0% դրույքաչափով հարկման, իսկ 10% դրույքաչափ կիրառվում էր գյուղատնտեսական ապրանքների 68.9%-ի և ոչ գյուղատնտեսականների 31.8%-ի նկատմամբ:

Եվրասիական տնտեսական միության գործարկումից հետո երրորդ երկրների նկատմամբ միասնական մաքսային սակագնի ընդունման արդյունքում Հայաստանում կիրառվող մաքսատուրքի որոշ դրույքաչափեր փոփոխվել են: Սակայն ԱՀԿ անդամակցությամբ ստանձնած պարտավորությունների համաձայն՝ անդամ երկիրն իրավասու է բարձրացնելու կիրառվող մաքսատուրքի դրույքաչափերը միայն լուրջ հիմնավորմամբ, միևնույն ժամանակ, վերջինս պարտավոր է անդամակից երկրներին տրամադրել բարձրացված մաքսատուրքերին համարժեք փոխհատուցում՝ հիմնականում այլ ապրանքախմբերի ներմուծման նկատմամբ առավել բարենպաստ պայմանների տրամադրմամբ: Ըստ այդմ՝ Հայաստանը հայտարարել է մինչև 2016 թվականի հունվարը ԱՀԿ անդամակից շահագրգիռ երկրների հետ համարժեք փոխհատուցման միջոցների վերաբերյալ խորհրդակցելու պատրաստակամության մասին: 2015 թվականի մարտ ամսվա դրությամբ մաքսատուրքի որոշ դրույքաչափերի բարձրացման դիմաց Հայաստանի նկատմամբ փոխհատուցման պահանջների ներկայացման իրավունքից օգտվելու ցանկություն են հայտնել Կանադան, Ուկրաինան, Շվեյցարիան, Ճապոնիան, Չինական Տայվեյը և Հոնկոնգը:

ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրի նկատմամբ նախատեսվում է նաև մաքսագերծման «post factum» ռեժիմի ներդրումը, ինչը ենթադրում է

<sup>5</sup> Նույն տեղում:

ապրանքների բացթողում նախքան բեռնամաքսային հայտարարագրի ներկայացումը: Բնականաբար, վերոնշյալ ռեժիմի կիրառությունը կտարածվի ապրանքների որոշակի խմբերի և ԱՏԳ մասնակիցների որոշակի կատեգորիաների նկատմամբ: Նախքան հայտարարագրումն ապրանքների դուրսգրման ընթացակարգն այժմ նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսգրքով, ընդ որում, վերջինիս 197-րդ հոդվածով հստակեցվում են ապրանքների կատեգորիաները, որոնց նկատմամբ կարող է կիրառվել մաքսազերծման նշված ռեժիմը: Գործնական կիրառություն ստանալու դեպքում մաքսազերծման «post factum» ռեժիմը նախևառաջ կտարածվի այն ապրանքների վրա, որոնք կներմուծվեն ԵԱՏՄ անդամ երկրների մաքսային տարածքում վերամշակման նպատակով, «ներմուծում մաքսային պահեստ», «ներմուծում ազատ տնտեսական գոտի» ռեժիմներով կամ ուղղակի ներդրումային նպատակներով: Մաքսազերծման նման ընթացակարգի ներդրումը կարող է խթանել արտաքին առևտուրը, քանի որ ներկրողներին հնարավորություն կընձեռի իրացնելու բաց թողնված ապրանքները՝ նախքան դրանց դիմաց մաքսային պարտավորությունների կատարումը:

Ընդ որում, նախքան բեռնամաքսային հայտարարագրի ներկայացումը կամ թերի հայտարարագրմամբ ապրանքների բացթողումը սահմանող ընթացակարգը լայնորեն կիրառվում է համաշխարհային պրակտիկայում և խրախուսվում միջազգային կոնվենցիաներով: Մասնավորապես՝ «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակության մասին» Կիոտոյի կոնվենցիան, որին Հայաստանը միացել է 2013 թվականին, նախատեսում է ապրանքների բացթողում նույնիսկ տվյալների թերի հայտարարագրման դեպքում: Այսինքն՝ հայտարարատուն իրավունք ունի մաքսային մարմինների կողմից հնարավոր ճանաչված պատճառներով, որոշ տվյալների բացակայության դեպքում ներկայացնել ոչ լիարժեք կազմված հայտարարագիր՝ սահմանված ժամկետում բաց թողնված տեղեկատվությունն ամբողջությամբ լրացնելու նախապայմանով, ընդ որում, նման դեպքերում ապրանքների բացթողումը չի հետաձգվում մինչև պակասող տեղեկատվության լրացումը (Կիոտոյի կոնվենցիա, կետ 3.13–3.14): Նմանօրինակ ընթացակարգերի կիրառմամբ հնարավոր է արագացնել երկրի մաքսային սահմանը հատող ապրանքների մաքսային ձևակերպման գործընթացը, հետաձգել ներմուծման հարկերի վճարումը, բաց թողնված ապրանքներն իրացնել նախքան դրանց դիմաց մաքսային պարտավորությունների կատարումը:

### Օգտագործված գրականություն

- 1 WTO, ITC and UNCTAD “World Tariff Profiles 2015”.
- 2 Eurasian Economic Commission, “WTO, Integration in Eurasia and Eurasian Economic Union“ // Third China Round Table on WTO Accessions: Post Accession “Maximizing the Benefits of WTO Membership and Global Economic Integration”, Dushanbe, Tajikistan, 2 to 5 June 2015.
3. <http://www.eaeunion.org/>
4. <http://www.eurasiancommission.org/>

**АННА ПАХЛЯН**

*Главный специалист отдела обеспечения качества,  
ассистент кафедры международных экономических отношений АГЭУ,  
кандидат экономических наук*

***Евразийский экономический союз в многосторонней торговой системе: Армения между ВТО и ЕАЭС.–***

Правовая база Евразийского экономического союза, действующего с января 2015 года, основана на принципах ВТО и лучшей международной практики. Еще в 2011 году был подписан договор о функционировании Таможенного союза в рамках многосторонней торговой системы, который устанавливает приоритет правил ВТО в рамках Таможенного союза, а также правовой системы Евразийского экономического союза.

Кроме того, Армения и Кыргызстан, присоединившиеся к ВТО до формирования Таможенного союза (Евразийского экономического союза), приняли более строгие обязательства либерализации внешней торговли, чем Россия, Казахстан и Белоруссия, еще находившиеся в статусе наблюдателей в ВТО.

**Ключевые слова:** *Евразийский экономический союз, ВТО, единый таможенный тариф, таможенные пошлины, режим таможенного оформления "постфактум", система многосторонней торговли.*

JEL: F01, F10, F13, F14, F17

**ANNA PAKHLYAN**

*Chief Specialist of the Quality Assurance Department,  
Assistant Professor at the Chair of International Economic Relations at ASUE,  
PhD in Economics*

***Eurasian Economic Union in the Multilateral Trading System: Armenia between the WTO and the EAEC.–***

The legal framework of the Eurasian Economic Union, being in force since January 2015, is based on WTO principles and best international practices. Still in 2011, an agreement on the functioning of the Customs Union within the framework of the multilateral trade system was signed setting the priority of the WTO rules in the framework of the Customs Union, as well as the legal system of the Eurasian Economic Union.

In addition, Armenia and Kyrgyzstan joined the WTO before the formation of the Customs Union (Eurasian Economic Union), adopted more stringent commitments of liberalization of foreign trade than Russia, Kazakhstan and Belarus, which are still in the status of an observer in the WTO.

**Key words:** *Eurasian Economic Union, WTO, the common customs tariff, customs duties, customs clearance mode "post factum", multilateral trading system.*

JEL: F01, F10, F13, F14, F17